

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՁԻ ՄԿՐՏՁՅԱՆ

Հայ գրականագիտությունը մի ծանր կորուստ էլ կրեց. կյանքի 68-րդ տարում վախճանվեց ակադեմիկոս Լևոն Մկրտչյանը: Դժվար է հավատալ, բայց տխուր իրողությունն աչքի առաջ է. մեր գրական միջավայրից, ասուլիսներից, մտերմական խոսք ու զրույցներից, մեր շրջապատից պակասեց մի վառ անհատականություն ևս, որ իրենով լցնում էր այս անցավոր կյանքի այնպիսի տարածքներ, որոնց պակասը դեռ պիտի զգանք...



Գրականագետների այն սերնդից էր, որն իր գործունեությունն սկսեց 50-ականների վերջերից և անմիջապես ասպարեզ հանեց տաղանդավոր գործիչների մի ողջ համաստեղություն: Գրական-գիտական մտքի այդ ընդհանուր վերելքի տարիներին նա այն քչերից եղավ, որոնք կարողացան հաստատել իրենց ինքնությունը, ինքնուրույն դիմագիծը, պահպանել ու զարգացնել այն: Վկան այն պատկառելի վաստակը և բարի անունը, որ թողեց իրենից հետո:

Ծնվել է 1933-ին Ախալցխա քաղաքում: 19-ամյա պատանի ռոմանտիկ խառնվածքի մղումով մտնում է ծովագնացության ու-

սումնաբան: Բայց շուտով զգում է իր իսկական կոչումը: 1954-ին արգեն, Երեանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և զրականության բաժնի ուսանող էր: 1958-ին, ավարտելով համալսարանը, դասախոսական աշխատանքի է անցնում մայր բուհում, որի հետ էլ պիտի կապվեր նրա աշխատանքային ողջ կենսագրությունը: 1973–1978 թթ. համալսարանի ռուս լեզվաբանության և թարգմանության տեսութայան, 1978-ից՝ ռուս գրականության ամբիոնների վարիչ, 1980-ից՝ ռուսաց լեզվի և զրականության ֆակուլտետի ղեկան:

Լևոն Մկրտչյանը լայնորեն ճանաչված էր իբրև ռուս գրականության բանիմաց մասնագետ ու սրբապաղանդիստ: Տասնամյակներ շարունակ պետական համալսարանում այդ առարկայի ուսուցման հաջողությունները կապվում են նաև նրա անվան հետ: Մասնադիտական հմտություն, մանկավարժական փայլուն ձիրքի շնորհիվ նա միշտ եղել է փնտրված դասախոս՝ գնահատված ու սիրված ուսանողների և գործընկերների կողմից:

Նրա պատրաստած կադրերը այսօր աշխատում են հանրապետության գիտական ու կրթական համակարգի ամենատարբեր օղակներում, նրանցից շատերը գիտությունների թեկնածուներ ու դոկտորներ են արգեն:

Հայն ու բազմազան էին Լևոն Մկրտչյանի գիտական հետաքրքրությունները: Բայց դրանց մեջ հիմնականն, այնուամենայնիվ, նախկին Խորհրդային Միության բազմալեզու գրականությունների փոխառնչություններ էին, հատկապես հայ-ռուսական գրական կապերը: Պատահական չէ, որ թեկնածուական թեզը նա պաշտպանել է «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» թեմայով, իսկ դոկտորական ատենախոսությունը «Հայ պոեզիան և XIX–XX դարի ռուս բանաստեղծները» ուսումնասիրությունն էր:

Հարկ չկա թերևս անուն առ անուն թվարկելու նրա տասնյակ գրքերը. դրանք հանրահայտ են: Նրա գրականագիտական խառնվածքը լավագույնս ընդլայնված է այդ գրքերում ամփոփված մեծ ու փոքր ուսումնասիրությունների անսովոր ժանրային բազմազանությունը. դասական տիպի հետազոտությունների կողքին մեծ թիվ են կազմում նաև, իր բնորոշմամբ, իրապատումները, հուշ-գիմանկարները, կարճ գրառումները, գրականագիտական էսսեները, ճամփորդական նոթերը և այլն: Եվ ամենուրեք ճկուն, ինքնատիպ մտածողություն, թեթև, աշխույժ հումորով համեմված շարագրանք:

Անվանի գրականագետի վերջին տարիների գիտական հետաքրքրությունների մեջ կա մի բնագավառ, որ գուցե նրա վաստակի ամենից ավելի գնահատելի մասն է: Դա հայ միջնադարյան գրականության ընտիր նմուշների ռուսերեն թարգմանությունն ու տարածումն է, գործ, ուր դրսևորվել է նրա նախանձելի եռանդն ու ջերմ նվիրվածությունը: Գրական հանրությունը քաջ ծանոթ են Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հատվածների, քուչակյան հայրենների, միջնադարյան տաղերգության ընտրանիի ռուսերեն հրատարակությունները, որոնք ուղեկցվում են կազմողի հմուտ ու բանիմաց ուսումնասիրություններով: Այս ամենը ճանաչված մտավորականի անուրանալի ծառայությունն է հայ մշակույթին:

Լևոն Մկրտչյանը զբաղվում էր մշակել իր կորովի նկարագրով, մարդկային հմայքով անվիճելի հեղինակություն էր վաստակել նաև Հայաստանի սահմաններից դուրս: Նա հանրաճանաչ անուն էր մանավանդ ռուս գրական շրջաններում և իր հարուստ ու բազմազան կապերը մինչև վերջ ծառայեցնում էր հայրենի մշակույթի բարգավաճմանը: Առհասարակ հայ գրականությունը ռուս ընթերցողին ծանոթացնելու և հակառակը՝ ռուս գրականությունը Հայաստանում պրոպագանդելու նրա անսպառ նախաձեռնությունները բացառիկ ծառայություն են երկու ազգային մշակույթներին և երբեք չեն մոռացվելու:

Նա նաև գրական կյանքի եռանդուն կազմակերպիչ էր: Մասնավորապես 1975–1979 թթ. Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարի պաշտոնում շատ բան է արել հայ գրականության միջազգային կապերը ընդարձակելու, հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: Արանք մշակույթի պատմության մեջ նկատելի հետք թողած երևույթներ են, որ մշտապես պատիվ պիտի բերեն իրենց իրականացնողին: Եվ այսօր

ներա անժամանակ կորստից հետո, մխիթարական է այն գիտակցությունը, որ նրա գործն ու վաստակը առանց գնահատության չեն մնացել: 1981 թ. նա արժանացել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, 1983 թ. Հայ դասական քնարերգության ուսումնասիրման և տարածման բնագավառում կատարած աշխատանքների համար նրան շնորհվել է ՀԽՍՀ պետական մրցանակ, 1965 թվականից ԽՍՀՄ գրողների միության անգամ էր, իսկ 1996 թ. ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Կյանքի վերջին տարիներին Լևոն Մկրտչյանը վարում էր նորարաց հայ-սլավոնական համալսարանի ռեկտորի պաշտոնը: Նրան արժանիորեն վստահվել էր մեր օրերի համար հիրավի նշանակալից մի գործ, և նա դեռ շատ անելիքներ ուներ այս նոր բնագավառում: Հուսանք և հավատանք, որ կդառնան արժանավոր հետնորդներ՝ նրա կիսատ թողածը ավարտին հասցնելու համար: Դա էլ հենց լավագույն հուշարձանը կլինի նրա անմոռաց հիշատակին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ